



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

*Juniper*

*Juniper*

891.715.  
m-14



-6 NOV 2011

ՅԵ. ԽԱԶԻՆ

# ՄԱՎԻԹ



ՆԿԱՐՆԵՐԸ  
ՇԻՅՐԻՆԻ


Ի ԱՊՐ. Գ. ՊԱՆԵՆ

391-710  
M-14



1931 ՅԵՐԵՎԱՆ





### ՆԱՎԹ

Կովկասում, Բագու և Գրոզնի քաղաքների շուրջը գետ-  
նի տակ, լայն տարածվում են նավթային լճերը:

Յերկրագնդի վրա այդպիսի տեղեր շատ քիչ կան:

Առաջներում այդտեղ տեր եյին դարձել կապիտալիստ-  
ները: Հեղափոխությունը դուրս քշեց նրանց Յեվրոպա: Հի-  
մա բանվորները նավթը հանում են վոչ թե կապիտալիստ-  
ների, այլ իրենց պրոլետարական պետություն համար:

Կապիտալիստները չեն կարողանում մոռանալ իրենց  
կորցրած իշխանությունը: Նրանք ուզում են պատերազմ  
սկսել Խորհրդային Միության դեմ, նրանք ուզում են վե-  
րադարձնել իրենց նավթահանքերը և գործարանները:

— Այդ բոլորը մերն է—գոռում են նրանք, բայլչեիկ-  
ները մեզ թալանել են:

Նրանք հավաքվում են մի տեղ և միասին դիտում,  
գնում են հնգամյակի քարտեզը: Քարտեզի վրա բոլոր նավ-  
թային հողերը նշանակված են փոքրիկ վիշկաներով, փորոնց  
կողքին թվանշաններ են գրված:

— Հնգամյակի վերջին նավթահանքերը և գործարան-  
ները կտան 4 անգամ ավելի նավթ, քան մեր ժամանակ  
եյին տալիս,—ասում են նրանք: Մենք այդ թույլ չենք տա:

“Նավթի թագավոր”, Դետերդինգը, կանչում է իր մոտ  
թերթերի խմբագիրներին, փող է տալիս և ասում.

— Կամպանիա սկսեք ԽՍՀՄ դեմ:

Մյուս ուրբ թերթավաճառները լցնում են Յեվրոպայի  
բոլոր քաղաքների փողոցներն իրենց աղաղակներով:

— Սրբազան կռիվ բայլչեիկների դեմ:



81948  
2001

— Յեվրոպան պետք է վոչնչացնի կոդպատիչներին:  
— Ամբողջ Յեվրոպան խորհուրդների իշխանության  
դեմ է:

Այս ձայներն ու աղ- դակները հասնում են Խորհրդա-  
յին բանվորներին:

— Այնքան ել հեշտ չեր մեր դեմ կռվել, պատասխա-  
նում են նրանք կապիտալիստներին:—Մենք կկարողանանք  
մեզ պաշտպանել, մենք կկառուցենք մեր սոցիալիստական  
տնտեսությունը: Հինգ տարում մենք կհասնենք և կանց-  
նենք ձեզանից:

Նավթագործ բանվորները փորոշեցին. նավթի հնգամյակը  
կկատարվի: Նավթահանքերը և գործարանները հնգամյակի  
վերջին տարում կտան 42 միլիոն տոնն նավթ:





Անցյալ տարի Սուրախանի նավթարդյունաբերության պլանների կատարմանը ճեղքվածք եր սպառնում: Այն ժամանակ հարվածայինները աշխատանքի դուրս յեկան դրոշակներով: Դրոշակների վրա գրված եր. „Նավթի հնգամյակը կկատարենք 4 տարում“:

10 սրում ճեղքվածքը լիվիլիդացիայի յենթարկվեց: Հեշտ բան չե նավթ հանելը: Նավթային շերտը սովորաբար շատ խոր ե ընկած: Այդ շերտին հասնելու համար հարկավոր ե գետնի մեջ շատ նեղ և յերկար հոր փորել: Այդ հորից գետնի տակի լճերից դուրս կգա թանգազին հեղուկը.



Ամենից առաջ նավթային շերտի վրա կառուցում են մի բարձր վիշկա: Այդ վիշկայում դնում են հոր փորող մեքենա:

Վիշկայից բանվորները խողովակներ են իջեցնում, խողովակները պտուտակում են իրար հետ, և դրանք սողում են մտնում գետնի տակ, կարմիր չծալվող վորդի նման: Հոր փորող մեքենան խողովակների համար տեղ ե պատրաստում: Մեքենայի բուրդուլի ծայրին հագցված ե ձկան պոչի նման յերկճիղ դուրը: Դա կանցնի բոլոր հողաշերտերի





միջով, մինչև նավթի հասնելը: Յեթե ճանապարհին քար պատահի, նա քարն ել կծակի: Վորքան խորանում ե հորը գետնի տակին, այնքան ել խոր են իջնում խողովակները: Զգուշ յեղիր: Նավթի հետ գետնի տակին գազեր են խառնված: Յեթե գազի ճնշումը ուժեղ ե, նավթը միանգամից կմտնի հորի մեջ, և այնտեղից դուրս կգա ու կըրարձրանա գետնի վրա սև, սոսկալի շատրվանի պես: Բանփորներն արդեն պատրաստ են: Հորն արդեն իր ժամանակին պատրաստ ե խողովակներով: Հոր փորող մեքենայի տեղը կանգնած ե ընդունող ապարատը: Դա թույլ չի տա,



վոր նավթը թափվի և գետնի յերեսին լիճ կազմի: Նավթը կհոսի խողովակներով, վոչ մի կաթիլ գետին չի թափվիր: Ուրիշ տեղերում գազի կուտակումն այնքան ել մեծ չի լինում: Այսպիսի տեղերում ուժեղ հանոց մեքենաները դուրս են քաշում հորից «ծույլ» նավթը: Գազերը գետնի տակից դուրս են գալիս նավթի հետ միասին: Միթե նրանք պետք ե իզուր կորչեն: Բռնի նրանց... Նրանք ել մեզ պետք կգան: Գազերը խողովակների միջով շատ հեռու չեն գնա, ճանապարհին նրանց կհավաքի գազակլանիչը: Գազակլանիչը կտանի գազերը պանածե պահամանները, այդ պահամանները






րում գազերը վերամշակվում են, ապա վորպես մաքուր գազովին զնում և պահեստարանները:

Նավթին սպասում են թորիչ մարտկոցները: Աստիճաններով շարվել են վերևից կտր «սաղավարտներով» ծածկված թորամանները: Վառարանները վառում են, նավթը տաքանում և 150 աստիճան: Նավթի վերևում գոլորշիներ են գոյանում: Այդ բենզինի գոլորշիներն են գատվում: Նավթն անցնում և հետևյալ թորմանը 600 աստիճան:

Գոլորշու նոր ամպերի միջից բարձրանում և կերտվում — սպիտակ նավթը:

Թեթև, սպիտակ նավթամթերքները գոլորշիանում են: Իրանք հավաքվում են «սաղավարտների» մեջ: Այստեղից



դրանք խողովակների սիջով զնում են բարձր աշտարակներ: Իսկ վերջին թորամանում մնում և խիժանման, ծանր մազուլթը: Այդ և նավթին տալիս մուգ, համարյա սև գույն: Մազուլթը եժան և լալ վառելանյութ և:

Առաջներում մազուլթն ուղղակի վառում էին վառարաններում: Բայց նավթի թորումից հետո նրա մեջ բենզինի և սպիտակ նավթի մասեր դեռ շատ են մնում:

Ափսոս և վառել այն: Ինքնաթիռների, ավտոմոբիլների, տրակտորների համար շատ բենզին և սպիտակ նավթ և հարկավոր: Այդ կարելի չե գատել մազուլթից:

Իրա համար գոյուլթյուն ունի կրեկինգ — ապարատը: Այդ հնարել են ամերիկացիները: Մեզ մոտ այդ նորուլթյուն





եւ վորքան շատ լինեն կրեկինգ—սպարատները, այնքան եւ բենզին շատ կլինի:

Եւ նավթ չկա: Բենզինը, սպիտակ նավթը, մագուիթը գույնզգույն խողովակներով հոսում են սառնարանները: Նավթամթերքները գալիս են այդ մեծ պահեստները պաղելու համար: Այդ պահեստարանների վրա վերեւից սառը ջուր են թափում, նավթի գույրը շինքը հեղուկ բենզին և սպիտակ նավթ դառնալուց հետո իջնում են պահեստարանների մեջ:

Նավթամթերքը պատրաստ եւ խողովակները նրան տանում են ամբողջ գործարանի միջով: Իր ամբողջ ճանապարհին նա վոչվոքի չի յերևացել: Թե նրա վերաբերմամբ ինչ ե կատարվում խողովակներում, թորամաններում, գլաններում, պահեստարաններում բանվորներն այդ մասին իմանում են չափող անոթների միջոցով:




Լավ նայիր... Հենց վոր մի քիչ անուշադիր լինես, — նավթը կանգ կառնի կամ կհոսա գետի պես, պահամանների մեջ չափից դուրս կտաքանա կամ կանցնի առանց բենզին, սպիտակ նավթ գատելու: Հիմնական ցեխերում քիչ բանվոր կա, բայց սրանց պատասխանատվությունը մեծ ե:

Պահեստարանները, ուր հոսում ե պատրաստի արտադրանքը, կառուցված են յերկաթից, բարձր, վորպես տներ, քարե հիմքերի վրա կանգնած են գործարանի ծայրին: Նավթամթերքներն այդտեղ սպասում են իրենց առաքմանը: Յեկեք ... Տարեք ...

Թող առանց ընդհատման աշխատեն մոտորները:







Բազմում, նավթահանքերից քիչ հեռու, լավում և թխկոց, շխկոց, աղմուկ, իրարանցում:

Այդտեղ կառուցում են առաջին կարգի խորհրդային տիպարի կրեկինգ-ապարատը:

Բավական և Ամերիկային իր մեքենաների համար արժեքից ավելի փող վճարել:

Մի քանի տարի յեղ կանցնի և մեր տեխնիկան կանցնի կապիտալիստական տեխնիկայից: Մեր բոլոր նավթահանքերում կկառուցենք մեր խորհրդային կրեկինգները:

Իզուր չեն աշխատում հարվածային բրիգադները, իզուր չեն մրցակցության մեջ մտնում նավթահանքերը:



Տարեցտարի այստեղ ստացվում և ել ավելի շատ նավթ: Այդ նավթը դուրս տանելու համար հարկավոր են հազարավոր գնացքներ և շոգե՛նավեր: Ավելի հեշտ չե՛ արդյոք նավթն ուղարկել խողովակներով: Թող հում նավթն ինքն ուղղակի հոսա Սև ծովի նավահանգիստները, դեպի հեռու նավթաթորիչ գործարանները: Այդպիսի գործարաններ կառուցված են Բաթում և Տուլայսե քաղաքներում: Բազմից Բաթում նավթը հոսում և խողովակներով 821 կիլոմետր: Խողովակները դրված են գետնի յերեսին: Հանցավոր կայարանները քաշում են խողովակների միջով նավթի գետը: Նույնպիսի նավթամուղ կառուցված և Գրոզնուց Տուլայսե:





Յերկաթուղով նավթամթերքները փոխադրում են ցիստերններով:  
 Այնտեղ, փորտեղ ցիստերնները լցնում են, մի շարք ծորակներ են կանգնած: Ցիստերնները մտնում են նրանց տակ և բերանները բաց անում:  
 Վորոշ ցիստերների մեջ ծորակները լցնում են սպիտակ նավթ, մյուսների մեջ՝ բենզին, յերրորդների մեջ մազութ:  
 Ապա կցում են շոգեշարժը: Նա սուլում է, շրխկացնում է, ցիստերնները տանում է գործարանները, նավահանգիստները, տրակտորակայանները և այերողրոմները:  
 Նավահանգիստներում նավթին սպասում են նավթատար շոգենավերը: Այս շոգենավերի վրա մեքենայական բա-



ժանվուները և նավաստիների նավասենյակը գտնվում են նավթի յետևի ծայրամասում:  
 Միակ ճանապարհորդն այնտեղ՝ նավթամթերքներն են: Այդ նավթամթերքները շոգենավերին տալիս են նավթաթորիչ գործարանները:  
 Բանվորները տեղնում են, թե ինչպես նավահանգիստներում նավթատար շոգենավերը լցվում են նավթով և ծովը գնում: Նրանք գիտեն, վոր նավթ մենք բավականին ունինք և նրա մի մասը մենք կարող ենք արսուհանել արտասահման: Խորհրդային նավթի համար կապիտալիստները վճարում են վոսկով: Մենք այդ վոսկով գնում ենք կապիտալիստներից զանազան մեքենաներ մեր հսկա գործարանների համար, վորոնք խորհրդային յերկիրը պողպատե և անհաղթելի կզարձեն:



ԿՈՉ ԹԵ 5  
 ԿՈՉ ԹԵ 4  
 ԿՈՉ ԹԵ 3

9



ԱՅԼ

2/1

ՏԱՐՈՒՄ

— Կոչ թե 5, կոչ թե 4, կոչ  
 թե 3, այլ 2<sup>1</sup>/<sub>2</sub> տարում կա-  
 տարեցին մեր հայրերը նավ-  
 թային հնգամյակը—գոռում են  
 Բազմի և Գրոզնու յերեխաները  
 — Մեր հայրերն էլ են կա-  
 տարել 2<sup>1</sup>/<sub>2</sub> տարում—պատաս-  
 խանում են ելեկտրոգազիոզի  
 Կարլ Մարքսի անվան գործա-  
 րանի, «Սվետլանի» Կաուչուկ  
 № 3-ի, Ելեկտրիկի, Մարգա-  
 նեցի հանքահորերի յերեխա-  
 ները:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԲԱՅԼ  
 ՀՆԳԱՄՅՎԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԵՏ ՉՄՆԱՍ:





3520